

ԿԱՐԾԻՔ

Ստեփան Հասան-Չալալյանի «Հասան-Չալալյանների տոհմի դերը հայոց պատմության մեջ XIII-XVI դարերում» խորագրով Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ստեփան Հասան-Չալալյանի «Հասան-Չալալյանների իշխանական տոհմի դերը հայոց պատմության մեջ XIII-XVI դդ.» վերտառությամբ ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, որոնցից երկրորդը բաժանված է երեք ենթագլուխների, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսությունը, լինելով գերազանցապես այլ հեղինակների աշխատությունների վերաշարադրանք (կոմպիլիացիա) (առանձնապես Բ. Ուլուբաբյանի «Խաչենի իշխանությունը X-XVI դդ., Ե. 1975»), գուրկ է նորույթից, այդ իսկ պատճառով, չնայած ատենախոսության թեմայի խիստ արդիականությանը, դրա շարադրանքը չի կարող համապատասխանել «արդիականություն» եզրույթին: Այսպես ատենախոսը գտնում է, որ «ատենախոսությունն արդիական է Ադրբեջանի ներկայիս հակահայկական քարոզչության դեմ պատվար ստեղծելու առումով ևս, քանի որ նրանում ապացուցվում է, որ թաթարական ցեղերի այս տարածաշրջան ներխուժելուց առաջ Արցախում արդեն կային հայկական իշխանություններ» (էջ 4-րդ): Այս մեջբերումից կարելի է եզրակացնել, որ ատենախոսն ինքն իրեն համարում է վերոհիշյալ աքսիոմատիկ ճշմարտության ապացուցողը:

Այլ հեղինակների աշխատություններից ատենախոսության հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ եթե Ստեփան Հասան-Չալալյանի տեսադաշտում հայտնված այդ աշխատությունների հեղինակները իրենց բուն նյութի վերաբերյալ վիճաբերից կամ վավերագրերից կարճ մեջբերումներ են կատարում, ապա Ստեփան Հասան-Չալալյանը անհարկի մեջբերում է այդ նույն վիճաբերի կամ վավերագրերի ամբողջական տեքստը: Այսպես, «Հասան-Չալալյան տոհմի ծագումը» վերտառությամբ առաջին գլխի 13-րդ էջը անտեղի, գրեթե ամբողջովին զբաղեցված է Առանշահիկների տոհմի ծագման վերաբերյալ Խորենացուց մեջբերմանը: Խորենացու հաղորդած այս ծագումնաբանությանն անդրադարձել է նաև Բ. Ուլուբաբյանը (էջ 56-րդ), սակայն ի տարբերություն հեղինակի, ամբողջական մեջբերում չի կատարել և շեշտել է, որ «Խորենացու ներկայացրած այս ծագումնաբանության հիմքում ընկած է ավանդությունը» (էջ 57-րդ): Նույն կերպ Բեգում թագուհու կողմից 1462 թ. Աղվանից Հովհաննես կաթողիկոսին տրված հրովարտակի ամբողջ տեքստը անհարկի զբաղեցնում է ատենախոսության 91-րդ էջը: Ատենախոսության 125-րդ և 126-րդ էջերում անհարկի ներկայացված է Աղվանից Գրիգոր կաթողիկոսի իրավունքները վերահաստատող Թահմասպ I շահի ծավալուն հրովարտակի ամբողջական տեքստը, նույնքան անհարկի տրված է վանականներից գանձվող հարկատեսակի՝ Վ.Փափագյանի կողմից կատարված բացատրությունը:

Հասան Մեծի՝ վանականի սքեմ հագնելուց հետո Խաչենի տարածքը իր ժառանգների միջև բաժանելու պնդումը և դրա վերաբերյալ Դադի վանքի կալվածագիրը ներմուծված են ատենախոսություն 14-րդ և 15-րդ էջեր 2010 թ. «Հանդես ամսօրեա»-ում տպագրված Ալ. Հակոբյանի «Խաչեն-Խոխանաբերդ ամրոցը և նրա իշխանատոհմը Թ-ԺԳ դդ.» հոդվածի 117-118 էջերից: Ատենախոսի ուշադրությունից վրիպել է այն փաստը, որ վերոհիշյալ Հասան Մեծն ամուսնացած լինելով Սյունիքի թագավորական դինաստիայի վերջին ներկայացուցիչ Գրիգոր Սյունեցու դստեր՝ Կատայի հետ, Գրիգորի մահից հետո՝ 1066-1070 թթ., մինչ Բաղաբերդի անկումը, եղել է Սյունիքի թագավորության վերջին գահակալը / Ս. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986, էջ 280/:

XIդ. վերջին - XIIդ. սկզբին Ներքին Խաչենում իշխած Վախտանգ Մեծի մասին ատենախոսության 15-րդ էջի III պարբերությունը առանց հղման կոմպիլիացիա է Բ.Ուլուբաբյանի վերոհիշյալ աշխատության 136-րդ էջի II պարբերությունից: Ատենախոսության համապատասխան էջում կարդում ենք. «XII դարի սկզբին Ներքին Խաչենի իշխանն էր Վախտանգ Մեծը: Ցավոք, մեզ չի հասել անմիջապես Վախտանգ Մեծ իշխանի անունից նրա գործունեության վերաբերյալ և ոչ մի վկայություն: Սակայն հարկ է նշել, որ թե՛ նրա որդու՝ Հասան Մեծի և թե՛ թոռան՝ Վախտանգ-Տանգիկի մասին խոսող պատմական վկայություններում հիշատակված է նաև Վախտանգ Մեծի անունը»: Բ.Ուլուբաբյանի աշխատության համապատասխան էջում գրված է. «Գոշի ժամանակագրության ընդգրկած տասնամյակներին Ներքին Խաչենի իշխանությունը, հավանաբար, գլխավորում էր Վախտանգ մեծ իշխանը: Ճիշտ է նրան վերաբերող ո՛չ մատենագիտական տեղեկություններ կան մեր ձեռքի տակ, ո՛չ էլ անմիջապես նրա անունից պահպանված վիմական արձանագրություններ: Սակայն նրա որդուն և թոռանը վերաբերող հիշատակարանները պահել են նաև նրա անունը»: Այսպիսով՝ միակ տարբերությունը կայանում է նրանում, որ եթե ատենախոսն առանց հիմնավորման Վախտանգ Մեծի իշխանավարումը վերագրում է XII դ. սկզբին, ապա Բ.Ուլուբաբյանն իր վերոհիշյալ աշխատության հաջորդ, 137-րդ էջում որոշակի մտահանգումներ է կատարում, որոնց համաձայն Վախտանգ Մեծն իշխել է 1120-1150-ական թվականներին: Ատենախոսի ուշադրությունից վրիպել է Ալ. Հակոբյանի՝ իր կողմից օգտագործված վերոհիշյալ հոդվածի 107-108-րդ էջերում տեղ գտած «Խաչվիմի» արձանագրությունը, ըստ որի Վախտանգ Մեծը պետք է վախճանված լինի կա՛մ 1142 թ., քանի որ մինչ 1182թ. ձեռնադրությունը նրա որդի Հասանն իշխել է քառասուն տարի, կա՛մ, համաձայն վերջինիս կնոջ՝ Մամայի կանգնեցրած խաչքարի, 1152 թ. /Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 215, թիվ 762 վիմագիր/: Ատենախոսը 16-րդ էջում համաձայնում է, կամ որ ավելի ճիշտ է, կրկնում է Բ.Ուլուբաբյանի գրքի 138-րդ էջի III պարբերությունում Խոսրով Գանձակեցու վարքի վերլուծության հենքի վրա կատարած այն մտահանգումը, որի համաձայն Վախտանգ Մեծը մահացել է մինչ 1167 թ.: Բ.Ուլուբաբյանը գրում է. «Վախտանգ մեծը պետք է որ մահացած լիներ մինչև 1167 թ., քանի որ այդ թվականին, ըստ Խոսրովիկի վարքի տեղեկության, Ներքին Խաչենի իշխանն էր նրա որդի Հասան Ա-ն, մի հանգամանք, որը չէր կարող լինել հոր կենդանությամբ»: Ատենախոսը, ներկայացնելով այս մտահանգումը, շարունակում է. «...կարծում ենք, եթե այդ թվականին (իմա 1167-ին) ողջ լիներ Վախտանգ Մեծը, ապա վերոնշյալ վարքում նրա անունը կնշվեր որպես մի

մարդու, ով կանգնած էր իշխանության գլուխ /16-րդ էջ, հինգերորդ պարբ./: Պարզ նկատելի է, որ ատենախոսը, մի քանի բառեր փոփոխելով, կարծիք է հայտնում մի քանի մասին, որը վերլուծել է Բ.Ուլուբաբյանը:

Վախթանգ-Տանգիկի անվան Տանգիկ մասնիկի ստուգաբանությունը (էջ 17-ի սկիզբ) մեջբերում է Բ. Ուլուբաբյանի վերոհիշյալ աշխատությունից (էջ 140, III պարբ.), նրա ամուսնացած լինելը Խորիշահի հետ (նույն 17-րդ էջի I պարբ.) վերստին կոմպիլիացիա է Բ.Ուլուբաբյանից (էջ 141, III պարբ.): Չնայած ատենախոսը տողատակում որպես աղբյուր նշում է նաև 1999թ. տպագրված Մ.Բարխուտարյանի «Աղվանից երկիր և դրացիք, Արցախ» գրքի 346-րդ և Հ.Մանանդյանի երկերի III հատորի 137-րդ էջերը, սակայն Բ.Ուլուբաբյանի գրքի և ատենախոսության վերոհիշյալ պարբերությունների խիստ նմանությունը ի ցույց են դնում, թե որտեղից է կատարված կոմպիլիացիան. Բ. Ուլուբաբյանը գրում է. «Վախտանգն ամուսնացած էր ժամանակի վրաց-հայկական միացյալ զորքերի գերագույն հրամանատար (ամիրսպասալար) Սարգիս Չաքարյանի դուստր Խորիշահի հետ, որը քույրն էր հետագայում հոր պաշտոնը ժառանգած Չաքարե Չաքարյանի և Վրաց արքունիքի աթաբեկ Իվանեի»: Ատենախոսությունում կարդում ենք. «Վախտանգ Տանգիկի կնոջ անունը Խորիշահ էր, ով հայ-վրացական զինված ուժերի ամիրսպասալար, իշխան Բագրատունի Սարգիս Չաքարյանի և Սահակադուխտ Արծրունու դուստրն էր՝ ամիրսպասալարի պաշտոնում Սարգիս Չաքարյանին հաջորդած Չաքարեի և Վրաց արքունիքի աթաբեկ Իվանեի քույրը»: Փաստորեն Բ.Ուլուբաբյանի պարբերությանն այստեղ միայն հավելվել է Սարգիս Չաքարյանի Բագրատունի ծագումն ու նրա կնոջ անունը:

Ատենախոսը, կրկնելով Բ. Ուլուբաբյանի գրքի 141-րդ էջի առաջին, երկրորդ և 142-րդ էջի առաջին և երկրորդ պարբերությունները, Ալ. Հակոբյանի հոդվածի 112-114-րդ էջերը, ատենախոսության 17-ից 20-րդ էջերում ներկայացնում է Վախտանգ Տանգիկին վերաբերող խաչքարի արձանագրությունն ու 1202 թ. Ավետարանի հիշատակարանը: Ատենախոսության 19-րդ էջի նախավերջին պարբերության երեք տողերը առանց հղման կրկնում են Բ.Ուլուբաբյանի գրքի 141-րդ էջի II պարբերության միտքը. Բ. Ուլուբաբյանը գրում է. «Ըստ Խաչենի ավանդույթի՝ ավագը պետք է կոչվեր պապի անունով՝ Հասան (Չալալ կոչված)»: Ատենախոսությունում կարդում ենք. «Համաձայն հայոց մեջ ընդունված ավանդույթի՝ ըստ որի ավագ որդուն անվանակոչում էին պապի անունով՝ Վախտանգ Տանգիկն իր ավագ որդուն՝ հետագայում Չալալ-Դուլա անվանվածին, անվանակոչել է իր հոր անունով՝ Հասան»: Ատենախոսության 20-րդ էջի II պարբերությունը կոմպիլիացիա է Բ.Ուլուբաբյանի գրքի նույն 141-րդ էջի II պարբերությունից: Բ.Ուլուբաբյանը գրում է. «Կարծում ենք, որ մահացածը Գանձասարի շինարարական մեծ արձանագրությունում հիշատակված երրորդ եղբայր Դավան է, որը հայտնի չէ այլուստ»: Ատենախոսության նշված էջում մահացածի ով լինելը հետևյալ կերպ է ներկայացված. «Ըստ երևույթին մահացածը հենց Դուլան է, որի անունն այլևս որևէ տեղ չի հիշատակվում»: Այս հիշատակարանից հեղինակը պարզում է, որ «Իշխան Վախթանգն ու իշխանուհի Խորիշահը ունեցել են երեք որդի և երեք դուստր «...ժառանգ մարմնաւոր եւ յիշատակ հոգեւոր»» (էջ 18-ի հինգերորդ պարբ.): Սակայն այս փաստը արդեն 1975թ. պարզել են Բ.Ուլուբաբյանը (էջ 174 III պարբ.) և Ալ.Հակոբյանն իր 2010 թ.

հրապարակած հոդվածի 112-113-րդ էջերում: Ատենախոսն էջ 18-ի VI պարբերությունում շեշտում է, որ հիշատակարանում առկա «հիշատակ հոգևոր» բառերը իրեն հիմք են տվել ենթադրելու, որ այն գրելու թվականին «նրանք (իմա Վախթանգն ու Խորիշահը) ունեցել են մահացած զավակ»: Նախ միտքը հայերեն չէ. եթե զավակներից մեկը մահացած է, ապա ծնողները նրան կորցրել են և ոչ թե ունեն: Ապա ինքը՝ հեղինակը, էջ 17-ի III պարբերությունում ներկայացնում է Գանձասարի Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գավթում առկա խաչքարի արձանագրությունը, որի համաձայն խաչքարը տեղադրվել է 1202 թ. Վախտանգի մահացած որդու շիրիմի վրա: Այսպիսով՝ ակնհայտ է դառնում, որ հեղինակը ոչ մի նոր բան չի պարզել: Եվ վերջապես հիշատակարանում նշվում է. «ծնաք երիս ուստերս և երիս դստերս ժառանգ մարմնավոր և հիշատակ հոգեվոր»: Հիշատակ հոգևոր բառերը վերաբերում են Վախթանգի և Խորիշահի բոլոր վեց զավակներին և ոչ թե միայն մահացածին:

Խորիշահի՝ Երուսաղեմ մեկնելուց առաջ երեք որդիներին ամուսնացնելու մասին գրելով՝ (էջ 23, I պարբ.) հեղինակը վերստին կրկնում է Բ.Ուլուբաբյանին (էջ 144, IV պարբ.):

Ատենախոսության նույն էջի երրորդ պարբերությունը համարյա բառացի կրկնություն է Բ.Ուլուբաբյանի գրքի նույն էջի հաջորդ՝ հինգերորդ պարբերության: Բ.Ուլուբաբյանը գրում է. «Խորիշահը մահացել է մինչև 1240թ., որովհետև Գանձասարի վանքի շինարարությանը վերաբերող մեծ արձանագրության մեջ նրա մասին խոսվում է իբրև վախճանվածի», ատենախոսությունում կարդում ենք. «Իշխանուհի Խորիշահը վախճանվել է մինչև 1240 թ., որովհետև Գանձասարի եկեղեցու շինարարությանը վերաբերող մեծ արձանագրության մեջ որդին՝ Հասան-Ջալալ-Դուլան, մոր մասին խոսում է իբրև վախճանվածի»: Պարզ նկատելի է, որ ատենախոսը Բ.Ուլուբաբյանի այս պարբերությանը ավելացրել է ընդամենը երեք՝ «իշխանուհի», «որդի», «Հասան-Ջալալ-Դուլա» բառերը, իսկ «նրա» դերանունը փոխարինել մայր գոյականով: Փաստորեն ատենախոսը յուրացրել է այս պարբերության միտքը, քանի որ ատենախոսությունում բացակայում է Բ.Ուլուբաբյանի գրքի նշված էջին հղումը:

Ատենախոսության 24-րդ էջի առաջին պարբերությունը կոմպիլիացիա է: Այս հատվածում կարդում ենք. «Արցախի Առանշահիկների իշխանական տոհմի ամենաականավոր ներկայացուցիչներից էր Հասան-Ջալալ-Դուլան, ում մասին մեծարանքով էին խոսում թե՛ պատմիչները, թե՛ ժողովուրդը»: Բ.Ուլուբաբյանն իր աշխատության 171-րդ էջի վերջին պարբերությունում գրում է. «Խաչենի իշխանական տոհմի ամենաականավոր ներկայացուցիչն էր Հասան-Ջալալը, կենդանության ժամանակ միշտ պատմիչների ուշադրության կենտրոնում, եղերական մահից հետո՝ ժողովրդի ու դարձյալ աղբյուրների միահամուռ գովաբանությամբ պսակված»: Պանեգիրիկի հաջորդ նախադասությունը համարյա բառացի արտագրություն է. «Ժամանակի հեղինակները ոգեշունչ խոսքերով են պատմում ինչպես նրա անձի, այնպես էլ նրա բացառիկ գործունեության մասին»: Բ.Ուլուբաբյանն իր աշխատության 172-րդ էջի առաջին պարբերությունում գրում է. «Ժամանակակից հեղինակները ոգեշունչ խոսքերով են պատմում նրա գործունեության մասին»: Միակ տարբերությունը Բ.Ուլուբաբյանի գրածից այն է, որ ատենախոսը ավելացնում է «անձ» գոյականը, իսկ «գործունեություն» գոյականի դիմաց ավելացնում է «բացառիկ» ածականը:

Ատենախոսության 25-րդ էջի վերջին և 26-րդ էջի առաջին պարբերություններում առկա Հասան Ջալալ-Դոլա անվան ստուգաբանությունը կրկնությունն է Բ.Ուլուբաբյանի աշխատության 172-րդ էջի առաջին և երկրորդ պարբերությունների:

Ատենախոսության երկրորդ գլխի 28-րդ էջի վերջին պարբերությունը Բ.Ուլուբաբյանի նշված աշխատության 176-րդ էջի երրորդ պարբերության վերաշարադրանք է: Այսպես Բ.Ուլուբաբյանը գրում է. «Ամենուր նրա հետ է կինը՝ բարեպաշտուհի Մամքանը, որն ինչպես ամուսնու հետ, այնպես նրանից գատ՝ և որդի Աթաբակի հետ, և միայնակ, եկեղեցիներ է նորոգում ու կառուցում, խաչքարեր է կանգնեցնում, օժանդակում մատյաններ ստեղծելուն, ապա նվիրում հայրենի վանքերին»: Ատենախոսության վերը նշված հատվածում կարդում ենք. «Մշտապես իշխանի հետ էր նաև նրա կինը՝ իշխանուհի Մամքանը, ով ինչպես ամուսնու և միակ արու զավակ Աթաբակ-Իվանեի հետ, այնպես էլ նրանից առանձին, եկեղեցիներ է կառուցել ու նորոգել, կանգնեցրել է բազում խաչքարեր, օժանդակել մատյաններ ստեղծելուն, ապա նվիրել է հայրենի եկեղեցիներին ու վանքերին»: Ակնհայտ է, որ երկու պարբերություններում արտահայտված միտքը նույնական է, իսկ քանի որ Բ.Ուլուբաբյանի աշխատությանը հղում չի տրվել, գործ ունենք ատենախոսի կողմից այլ հեղինակի մտքի յուրացման հետ: Ատենախոսության 29-րդ էջի առաջին պարբերությունը Բ.Ուլուբաբյանի աշխատության 176-րդ էջի չորրորդ պարբերության վերաշարադրանք-յուրացում է: Բ.Ուլուբաբյանը գրում է. «Առաջին արձանագրությունը, որ պատմում է Հասան-Ջալալի կառուցողական գործունեության մասին, պահպանվել է նրա տոհմին պատկանող Վաճառ ավանի ավերակներում (այժմյան Ծմակահող գյուղի մոտ)»: Ատենախոսության վերը նշված հատվածում կարդում ենք. «Հասան-Ջալալ-Դոլայի գործունեության մասին պատմող առաջին արձանագրությունը պահպանվել է նրա տոհմին պատկանող Վաճառ գյուղատեղում, որի մասին վկայում են այժմյան Արցախի Հանրապետության Ծմակահող գյուղի մոտ գտնվող հետքերը...»:

Ատենախոսության 30-րդ էջի առաջին պարբերությունում զետեղված Հասան-Ջալալյաններին պատկանող պալատի անվան ստուգաբանությունը Շ.Մկրտչյանի 1988թ. Երևանում հրատարակած "Историко-архитектурные памятники Нагорного Карабаха" գրքի 21-րդ էջում առկա համապատասխան հատվածի ուղղակի թարգմանությունն է. Շ. Մկրտչյանը գրում է. "В эпоху средневековья княжеские дворцы в Армении назывались «дарабас», «дарапас» или «дарбас», «дарпас»": Ատենախոսության վերոնշյալ հատվածում կարդում ենք. «միջնադարյան Հայաստանում իշխանական ապարանքները կոչվել են «դարաբաս», «դարապաս» կամ «դարբաս», «դարպաս»»: Չնայած ատենախոսը «կամ» շախկապից առաջ դարաբաս, դարապաս բառերի համար հղում է կատարում հայկազյան բառարանին, իսկ դարբաս, դարպաս բառերի համար Ղ. Ալիշանի «Միսական» գրքին, սակայն պարզ նկատելի է, թե որտեղից է կատարված կոմպիլիացիան:

Ատենախոսության 40-րդ էջի վերջին և 41-րդի էջի առաջին պարբերություններում Գանձասարի եկեղեցու մասին Շառլ Դիլի և Ա. Յակոբսոնի կարծիքները, համարյա նույնական, առկա են Բ.Ուլուբաբյանի աշխատության 178-րդ էջի առաջին և երկրորդ պարբերություններում:

Ատենախոսության 50-րդ էջի չորրորդ պարբերության սկզբում կարդում ենք. «Բաչու-Ղուրչիի արշավանքի ու Կարինի նվաճման մասին պատմող Կ. Գանձակեցին գրել է, որ այդ մար-

տերում հայ իշխաններն ու գորքերն ամեն կերպ ջանում էին օգնել տեղի հայությանը»: Բ.Ուլուբաբյանի գրքի 194-էջի երրորդ պարբերությունում գրված է. «Այս մարտերում հայ իշխաններն ու գորքերն ամեն կերպ ջանում էին օգնել տեղի հայությանը»: Ե՛վ Բ.Ուլուբաբյանի գրքի, և՛ ատենախոսության վերոհիշյալ պարբերություններին հետևում է նույնական մեջբերում Կ.Գանձակեցուց: Վերստին ատենախոսը կատարել է Բ.Ուլուբաբյանի մտքի յուրացում:

57 և 58-րդ էջերում ատենախոսության հեղինակը պարզում է Բաթու խանին այցելած Հասան Ջալալ-Դոլայի պատվիրակության անդամների ով լինելը: Սակայն վերոհիշյալ պատվիրակությունում ընդգրկված անձանց կենսագրական տվյալներին իր աշխատության 197-ից 202-րդ էջերում արդեն իսկ մանրամասն անդրադարձել է Բ.Ուլուբաբյանը: Ատենախոսության 58-59 էջերում Ներքին Խաչենի տիրոջ և Բաթու խանի միջև հանդիպման վերաբերյալ նյութի շարադրանքը ևս նման է Բ.Ուլուբաբյանի գրքի 203-րդ էջի շարադրանքին. այսպես նույնական են ատենախոսության 58-րդ էջի երկորդ, երրորդ և Բ.Ուլուբաբյանի գրքի 203-րդ էջի երկրորդ ու չորրորդ պարբերությունները: Շատ նման են նաև ատենախոսության 59-րդ էջի երրորդ, չորրորդ և Բ. Ուլուբաբյանի գրքի 203-րդ էջի հինգերորդ պարբերությունները: Ատենախոսության 60-րդ էջի վերջին ու 61-րդ էջի առաջին և երկրորդ պարբերություններում և Բ.Ուլուբաբյանի գրքի 206-րդ էջի առաջին և երկրորդ պարբերություններում շարադրված միտքը նույնական է, բացակայում է Բ. Ուլուբաբյանի գրքին հղումը- ատենախոսություն. «Սակայն դժբախտաբար հետագա իրադարձությունները ծավալվեցին ի վնաս Արցախի մեծ իշխանի: Տուն վերադառնալուն պես մահացավ իր բարեկամ Սարթախը: Նրան թունավորել էին իր մահմեդական ազգականները՝ Բերքեն ու Բարքաչայը: Արցախ վերադառնալու ճանապարհին Հասան-Ջալալ-Դոլան գործի բերումով մնաց Թավրիզում, իսկ Մամբանին ու Աթաբեկին ուղարկեց Խաչեն: Թավրիզից վերադառնալով՝ կնոջը գտավ վախճանված»: Բ.Ուլուբաբյանի գիրք. «Դժբախտաբար հետագա դեպքերը դասավորվում են ի վնաս Խաչենի մեծ իշխանի: Նախ նա կորցնում է իր բարեկամ ու հովանավոր Սարթախին: Վերջինս վերադառնալուն պես մեռնում է հարազատների տված մահադեղից: Հասան-Ջալալը վերադարձի ճանապարհին ուշանում է Թավրիզում: Մամբանին ու Աթաբեկին նա ուղարկել էր հայրենիք: Վերադառնալով՝ կնոջը գտնում է վախճանված» :

71-73 էջերում հեղինակը «ավելորդ չի համարում փոքր-ինչ մանրամասն ներկայացնել Արցախի իշխանաց իշխանի տիտղոսները», սակայն այդ տիտղոսներին անդրադարձել է Բ.Ուլուբաբյանն իր աշխատության 211-214-րդ էջերում: 77-րդ էջում նկարագրված է Հասան Ջալալ-Դոլայի դաշույնի երախակալի մակագրությունը: Սակայն դրան, ինչպես ինքը, ատենախոսության հեղինակն է նշում, առանձին հոդվածով անդրադարձել է Հ.Օրբելին: Այս նույն դաշույնի վրա եղած մակագրությանը Բ.Ուլուբաբյանը տրամադրել է իր աշխատության 19-20-րդ էջերը:

79-րդ էջի չորրորդ պարբերությունները համարյա նույնական են Բ.Ուլուբաբյանի աշխատության 217-րդ էջի ծանոթագրությանը: Ատենախոսություն-«սակայն հայտնի է, որ Հասան-Ջալալ-Դոլայի միակ արու զավակի մկրտչական անունը եղել է Իվանե՝ «միոյ մանկանս իմոյ Իվանին...»: Ամենայն հավանականությամբ Հասան-Ջալալ-Դոլան իր միակ որդուն անվանակոչել է ի պատիվ իր եղբոր՝ Իվանեի, կամ որ ավելի հավանական է իր քեռու՝ Վրաց արքունիքի աթաբեկ

Իվանեի»; ծանոթագրություն-«Սակայն մենք գիտենք, որ Հասան-Ջալալի միակ արու զավակի մկրտչական անունն Իվանե է եղել «միոյ մանկանս իմոյ Իվանին»: Ըստ երևույթին նրան կոչել են ժամանակի ականավոր ազգականի՝ հոր քեռի աթաբակ Իվանե Ջաքարյանի անունից ու կոչումից»:

Ատենախոսության երրորդ գլուխը շարադրված է գերազանցապես Բ.Ուլուբաբյանի վերոհիշյալ աշխատության, մասամբ Գ. Կիրակոսյանի Երևանում 1997 թ. տպագրված «Հայաստանը Լենկ Թեմուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում» գրքի հենքի վրա. այսպես ատենախոսության 82-րդ էջի երրորդ, չորրորդ պարբերությունները Բ.Ուլուբաբյանի գրքի համապատասխանաբար 301-րդ էջի առաջին, ատենախոսության 83-րդ էջի առաջինից հինգերորդ պարբերությունները Բ. Ուլուբաբյանի գրքի 301-րդ էջի երկրորդից հինգերորդ, ատենախոսության 84-րդ էջի առաջինից չորրորդ պարբերությունները Բ. Ուլուբաբյանի գրքի 302-րդ էջի երկրորդ և երրորդ պարբերությունների կոմպիլիացիա են, ատենախոսության 85-րդ էջի երրորդ, չորրորդ պարբերությունները կոմպիլիացիա են՝ Բ. Ուլուբաբյանի գրքի 303-րդ էջի վերջին նախադասությունից սկսած մինչև հաջորդ՝ 304-րդ էջի սկզբի առաջին հինգ տողերը: Ատենախոսության 87-րդ էջի վերջին պարբերությունից մինչև 94-րդ էջի առաջին պարբերությունը տրամադրված է Առաջաձոր գյուղի եկեղեցու Ավետարանի հիշատարանում առկա հողային վեճի մասնակիցների ով լինելը պարզելուն, սակայն Բ. Ուլուբաբյանը /307-րդ էջի հինգերորդից մինչև 310-րդ էջի առաջին պարբերություն/ և Գ.Կիրակոսյանն /239-րդ էջի վերջին նախադասությունից մինչև 242-րդ էջի առաջին պարբերություն/ արդեն իսկ մանրամասն անդրադարձել են այդ հարցին: Տարբերությունը կայանում է նրանում, որ ատենախոսն ամբողջովին ներկայացնում է հիշատակարանի տեքստը և անհարկի «թարգմանում» բարբառային դարձվածքները: Ատենախոսության 92-րդ էջում ներկայացված են այն բոլոր հիշատակարանների տեքստերը, ուր առկա է Հովհաննես կաթողիկոսի անունը: Տարբերությունը Բ. Ուլուբաբյանի գրքի 308-րդ էջում նույն կաթողիկոսի մասին եղած նյութից այն է, որ Բ. Ուլուբաբյանը ներկայացնում է միայն այդ հիշատակարանները գրելու տարեթվերը: Ատենախոսության 97-րդ էջի երկրորդ պարբերությունը կոմպիլիացիա է Բ. Ուլուբաբյանի գրքի 312-րդ էջի երկրորդ պարբերությունից:

Երրորդ գլխում նույնպես առկա է Բ. Ուլուբաբյանի մտքի յուրացում: Ատենախոսության 84-րդ էջի երրորդ և չորրորդ պարբերություններում գրված է. «Ցավոք, բացի այս անավարտ արձանագրությունից, Իվանե Մեծի մասին այլ տեղեկություն հայտնի չէ: Ենթադրելի է, որ նա եղել է Ջալալ I Հասան-Ջալալյանի որդին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որի համաձայն Հայաստանում, մասնավորապես՝ Արցախում ընդունված ավանդույթի՝ ավագ որդուն անվանակոչում էին պապի անունով: Իսկ ինչպես երևում է արձանագրություններից, Ջալալ I-ի հոր անունը եղել է Իվանե»: Բ.Ուլուբաբյանի գրքի 302-րդ էջի երրորդ պարբերությունում կարդում ենք. «Այս Իվանեի մասին, դժբախտաբար ուրիշ տեղեկություններ չկան: Սակայն դժվար չէ նրան տեղավորել Հասան-Ջալալյանների տոհմացանկում՝ իրեն վերապահված օղակում, այսինքն համարել Ջալալ մեծի որդին, քանի որ վերջինս ավագ որդուն պետք է կոչեր հոր անունով, իսկ Ջալալի հոր անունը, ինչպես հայտնի է Գանձասարի հայտնի ձեռագրի հիշատակարանից, եղել է Իվանե Աթաբակ»:

Ատենախոսության չորրորդ գլուխը նույնպես կրում է, այսպես ասենք, Բ. Ուլուբաբյանի նշված գրքի ազդեցությունը: Այս գլխում խոսվում է այն նույն անձանց, նրանց մասնակցությամբ տեղի ունեցած իրադարձությունների մասին, որոնց մասին իր վերոհիշյալ աշխատությունում գրել է Բ. Ուլուբաբյանը: Օգտագործված աղբյուրներն ու եզրահանգումներն էլ գերազանցապես համընկնում են Բ. Ուլուբաբյանի օգտագործած աղբյուրներին ու եզրահանգումներին. այսպես ատենախոսը 103-րդ էջի չորրորդ պարբերությունում մեջբերելով Մատենադարանում 2743 թվահամարի տակ պահվող Ավետարանի երրորդ հիշատակարանի բովանդակությունը, վերջին պարբերությունում «պարզում է» այս հիշատակարանը գրելու ժամանակը. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գրիգոր իշխանի կինը՝ Ասփան մահացել է 1311թ. կարող ենք ասել, որ վերոհիշյալ հիշատակարանը գրվել է XIV դ. սկզբին»: Բ. Ուլուբաբյանն իր գրքի 317 և 318-րդ էջերում վերլուծելով վերոհիշյալ Ավետարանը, նույն հիշատակարանի վերաբերյալ գրում է. «...հիշատակարանից իմանում ենք, որ Ասփան մահացել է 1311 թ... հետևաբար վերևի հիշատակարանը գրված է նրա մահվանից հետո, թերևս անմիջապես հետո» /318-րդ էջի առաջին պարբ.:

Ատենախոսության 111-ից 116 էջերում խոսվում է Եղիշե արեղայի Թոխատում 1532 թ. գրված հիշատակարանի և նրանում հիշված անձանց մասին: Այդ հիշատակարանին մանրամասն անդրադառնում է նաև Բ. Ուլուբաբյանն իր վերոհիշյալ գրքի 349-ից 354-րդ էջերում: Նույն հիշատակարանի վերլուծությունից արված եզրակացությունները թե՛ ատենախոսությունում, թե՛ Բ. Ուլուբաբյանի գրքում համարյա ամբողջովին նույնական են, երկու բացառությամբ՝ առաջին-Բ. Ուլուբաբյանը գտնում է, որ Խաչենի իշխան Մեհրաբ-բեկը Վելիջան Հասան-Ջալալյանի որդին է, իսկ ատենախոսը փաստում է, որ վերոհիշյալ Մեհրաբ-բեկը Հատիր-Մելիքի որդին է և երկրորդ-ատենախոսության 113-րդ էջի երրորդ պարբերությունից մինչև 114-րդ էջի չորրորդ պարբերություն տեղ է գտել այն պնդումը, թե Արցախի Հանրապետության Խաչեն, նախկինում Մեյդիշեն գյուղը հիմնել է XVI դ. սկզբում ապրած Հատիր-Մելիքի որդի Մեյխտին կամ Մայտունը: Այս պնդումը սխալ է, քանի որ Արցախի Հանրապետության հուշարձանների տեղեկատվական շտեմարանում /<http://www.monuments.nkr.am/pages.php?al=home&d=9&act=filter&mtype=9/> նշվում է, որ գյուղի տարածքում գտնվում են XI-XII դդ. տասից ավել խաչքարեր, ինչից հետևում է, որ գյուղը շատ ավելի հին ծագում ունի:

Ատենախոսը 112-րդ էջի երկրորդ պարբերությունում «պարզում է», որ Եղիշե արեղան սերում է Հասան-Ջալալյաններից: Բ. Ուլուբաբյանն էլ իր գրքի 353-րդ էջի առաջին պարբերությունում նույն եզրահանգմանն է գալիս: Ատենախոսն իր աշխատանքի 114-րդ էջի հինգերորդ և վեցերորդ պարբերություններում «պարզում է», որ Եղիշե արեղան հիշատակարանում չի նշել իր եղբայրներից երկուսի անունը: Նրանցից մեկի՝ Սարգսի անունն ատենախոսը պարզում է Գանձասարի եկեղեցու պատին արված արձանագրությամբ (նշենք, որ այդ արձանագրությունը ներկայացրել է նաև Բ. Ուլուբաբյանը (355 էջի I պարբ.)): Սակայն Բ. Ուլուբաբյանը դեռ 1975 թ. պարզել է այդ եղբոր անունը: Նրա գրքի 354-րդ էջի առաջին պարբերությունում կարդում ենք. «Եղիշեն իր եղբայրների անունները տալիս չի հիշում Սարգիս կաթողիկոսին: Շատ հնարավոր է, որ նա /Եղիշեն/ Խաչենից դուրս եկած լիներ, երբ Սարգիսը չէր ստացել իր հոգևորական անունը»:

Ատենախոսության հաջորդ՝ 115-րդ էջի առաջին պարբերությունը նույնական է Բ. Ուլուբաբյանի գրքի 354-րդ էջի վերջին պարբերությանը (Բ.Ուլուբաբյանի գրքին հղումը բացակայում է).
ատենախոսություն-«Սա Աղվանից 69-րդ կաթողիկոս Սարգիս Հասան-Ջալալյանի սեփական առաջին արձանագրությունն է 1546 թվականից, որտեղ նա պատմում է Գանձասարի եկեղեցուն արված իր նվիրատվությունների մասին: Սարգիս կաթողիկոսի գահակալության առաջին տարիների մասին տեղեկություն չունենք»: Բ. Ուլուբաբյանի վերոհիշյալ աշխատություն՝ «Սարգիս կաթողիկոսի գահակալության առաջին տարիների մասին տեղեկություններ չունենք: Նրա սեփական առաջին արձանագրությունը 1546 թվականից է և պատմում է իր նվիրատվությունները Գանձասարին»:

Սարգիս կաթողիկոսի կողմից Գանձասարի վանքի վերանորոգման տարեթվի մասին ատենախոսության 115-րդ էջի չորրորդ և հինգերորդ պարբերությունները համարյա բառացի կոմպիլիացիա են Բ. Ուլուբաբյանի գրքի 355-րդ էջի երկրորդ և երրորդ պարբերությունների: Ատենախոսության նույն էջի վեցերորդ պարբերությունը, ուր նշվում է Սարգսի մահվան տարեթիվը կոմպիլիացիա է Բ. Ուլուբաբյանի գրքի վերոհիշյալ, 355-րդ էջի չորրորդ պարբերության: Ատենախոսության 118-րդ էջի չորրորդ և հինգերորդ պարբերությունները, ուր խոսվում է Մեհրաբ-բեկի օրոք օսմանյան բանակի Արցախ ներխուժման մասին, Բ. Ուլուբաբյանի գրքի 359-րդ էջում տեղ գտած նյութի կրճատ շարադրանքն են: Մեհրաբ-բեկի չորս զավակների մասին ատենախոսության 118-ից 128-րդ էջերի շարադրանքն առանձին բացառություններով կրկնում է Բ.Ուլուբաբյանի գրքի շարադրանքը. 120-րդ էջի երրորդ և 122-րդ էջի առաջին պարբերություններում մեջբերումներ են կատարված նույն գրքից, որոնք անհարկի են, քանի որ այդ մեջբերումներում Բ. Ուլուբաբյանը ոչ մի նորամուծություն չի անում, նշելով, թե ինչու անդրկովկասյան ժողովուրդների էլիտայի ներկայացուցիչները դիմեցին Շահ-Աբասին, կամ թե վերջինս ինչպես վարձահատույց եղավ: Եթե Բ. Ուլուբաբյանը Շահ-Աբասի կողմից իրականացված 1604 թ. բռնագաղթը ներկայացնելիս մեջբերում է Լեոյին /Խաչենի իշխանությունը X-XVI դդ., էջ 369 վերջին պարբ./ նույնն անում է ատենախոսը /122 էջ, վերջին պարբ./: 119-րդ էջի երրորդ պարբերությունը նույնական է Բ. Ուլուբաբյանի գրքի 363-րդ էջի առաջին պարբերության հետ. ատենախոսություն՝ «Պետք նշել, որ ինչպես իր նախորդներին, այնպես էլ Ջալալ III-ին բաժին էր հասել կառավարման ծանրագույն ժամանակաշրջան: Հայ ժողովուրդը կողոպտվում ու կոտորվում էր թյուրքական և պարսկական բանակների կողմից»: Բ. Ուլուբաբյանի գիրք՝ «Նրան ու իր ժամանակակիցներին ճակատագրով բաժին էր ընկել հայ ժողովրդի բազմադարյան պատմության ամենածանրագույն ժամանակներից մեկը: Օսմանյան և պարսկական բանակները հերթով նվաճում էին Հայաստանը, կողոպտում ու կոտորում ժողովրդին»: Բ. Ուլուբաբյանը հաջորդ պարբերությունում այս արհավիրքը վկայող հիշատակարանից մեջբերում է անում: Ատենախոսն իր շարադրանքի հաջորդ պարբերությունում ներկայացնում է նույն հիշատակարանն ամբողջովին: Բ.Ուլուբաբյանն իր գրքի 364-րդ էջի առաջին պարբերությունում տեղեկություն է տալիս այն Ավետարանի մասին, ուր տեղ է գտել վերոհիշյալ հիշատակարանը: Նույնն անում է ատենախոսը 119-րդ էջի հինգերորդ պարբերությունում: Ատենախոսը, ի տարբերություն Բ. Ուլուբաբյանի, «Ըստացայ սբ. Ավետարանս ի

գերութենէն եւ Ճալալ» արտահայտությունը սխալ է ընկալում, երբ գրում է, թե այն գողացել էին: Իրականում վերոհիշյալ մեջբերումը նշանակում է, որ այլադավանները Ավետարանը բացահայտ կողոպտել են: Ատենախոսության 123-րդ էջի առաջին պարբերության սկիզբը Բ. Ուլուբաբյանի գրքի 370-րդ էջի առաջին և երկրորդ պարբերություններում տեղ գտած նախադասությունների միավորում է. Ատենախոսություն. «1606 թ. Խաչենի իշխան Ջալալ III Հասան-Ջալալյանը Գանձասարում գրել է հիշատակարան, որտեղ չի խոսել ո՛չ Խաչենի մասին, ո՛չ մի շարք հայ երևելիների, այդ թվում իր խընդրանքով Հայաստան եկած շահ Աբբասի մասին, այլ միայն հիշել է իր ծնողներին, զավակներին, հարազատներին, որոնցից ոմանք սակայն արդեն վախճանվել էին»;

Բ. Ուլուբաբյանի գիրք. «Հաջորդ տարի (1606) Ջալալ իշխանը Գանձասարում գրում է հիշատակարան (այս հատվածը Բ. Ուլուբաբյանի գրքի 370-րդ էջի առաջին պարբերությունից է)... Ջալալ իշխանը լռում է իր երկրի վիճակի մասին: Ո՛չ մի խոսք իր և իր դասակիցների խնդրանքով Հայաստան եկած շահ Աբբասի մասին (նույն էջի երկրորդ պարբերության սկիզբ) և միայն հիշում է իր մեռած ու կենդանի հարազատներին (առաջին պարբերության շարունակություն)»:

Ատենախոսության վերջին գլխի 101-ից 110-րդ էջերում ստուգաբանվում են «պարոն», «մելիք», «բեկ» տերմինները: Սակայն դրա հարկը չկա, քանի որ այդ տերմինների ստուգաբանությունը տրվել է շատ ավելի վաղ և այս առումով ատենախոսը ոչ մի նոր բան չի ասում: Ատենախոսն իր առաջ խնդիր է դնում ցույց տալ, «թե Հասան-Ջալալյանների տոհմից ո՞վ է առաջինը կրել մելիք տիտղոսը» /101-րդ էջի նախավերջին պարբ./: Սակայն այդ խնդիրը նա չի կարողանում կատարել և 108-րդ էջի երրորդ պարբերությունում խոստովանում է. «Ինչ վերաբերում է այն հարցին, թե Հասան-Ջալալյանների տոհմից ո՞վ է եղել այն իշխանը, ով շահ Թահմասպ I-ից, որպես մելիքության ինստիտուտի սկզբնավորողի, ստացել է «մելիք» կոչվելու մասին շահական հրովարտակը, ապա պետք է ասենք, որ բավարար փաստերի բացակայության պատճառով, ցավոք դեռևս հնարավոր չէ պատասխանել այդ հարցին»:

Ատենախոսությունում առկա են կրկնություններ. Այսպես՝ 31-րդ էջի երրորդ պարբերությունում նշվում է Կ. Գանձակեցու այն հաղորդումը, որ «Գանձասարը հնում եղել է Ներքին Խաչենի իշխանական տոհմի տապանատունը»: Նույն միտքը կրկնվում է հաջորդ էջի չորրորդ պարբերությունում: Կրկնություն է 28-րդ էջի առաջին և 58-րդ էջի երրորդ պարբերություններում Բաթուխանի և Հասան-Ջալալի հանդիպման մասին միտքը, 32-րդ էջի հինգերորդ և 33-րդ էջի երկրորդ, նույն 33-րդ էջի չորրորդ և 34-րդ էջի առաջին պարբերությունները:

Ատենախոսության հեղինակի սակավաթիվ սեփական եզրահանգումներն ու վերլուծությունները կա՛մ թերարժեք են, կա՛մ անընդունելի: Այդ կապակցությամբ ցանկանում ենք ընդձել.

1. 18-20-րդ էջերում հեղինակը կատարում է Գանձասարի եկեղեցու պատին առկա Հասան Ջալալ-Դուլա իշխանի արձանագրության ստուգաբանությունը, համեմատում այն Վախթանգի զավակների մասին Վարդան Բարձրաբերդցու և Կիրակոս Գանձակեցու վկայությունների հետ ու եզրակացնում, որ Վախտանգն ունեցել է 4 որդի: Սակայն այս ինֆորմացիան համարյա բառացիորեն առկա է Բ. Ուլուբաբյանի նշված աշխատությունում (էջ 174-175): Միակ տարբերությունը հեղինակի փորձն է բացատրել Հասան և Ջաքարե եղբայրների հավելյալ անունները առաջին

դեպքում Ջալալ-Դոլա, երկրորդ դեպքում՝ Նասր-Դոլա: Հեղինակը ենթադրում է, որ Հասանն ու Ջաքարեն այդ կերպ փորձել են իրենց «մահացած եղբոր անունը վառ պահել» (էջ 20): Սա անհամոզիչ բացատրություն է, քանի որ Վարդան Արևելցին շեշտում է, որ դրանք փաղաքշական (զգվանաց) անուններ են: /Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Ե., 2001, էջ 142/

2. Էջ 23-ում հեղինակը, անդրադառնալով իշխանուհի Խորիշահի Երսուսադեմ ուխտագնացությանը, շեշտում է, որ իշխանուհին «ճգնել է Հարության տաճարում և այնտեղ կնքել իր մահկանացուն»: Անհրաժեշտ ենք համարում հեղինակի ուշադրությունը բևեռել այն հանգամանքի վրա, որ Փրկչի Հարության տաճարը ճգնավայր չէր, և Խորիշահը չէր կարող Հարության տաճարում ճգնել:

3. 26-րդ էջում նշվում է. «Հասան-Ջալալ-Դոլան իր անվան մեջ խտացրել է պետության գաղափարը»: Հեղինակը մոռանում է, որ 20-րդ էջում շեշտել է, թե Դոլա հավելյալ անունը Հասան-Ջալալը և Ջաքարեն կիրառել են իրենց մահացած եղբոր հիշատակը վառ պահելու համար: Միջնադարյան քրիստոնեական գաղափարախոսության մեջ խապառ բացակայում էր իշխողի և պետության միասնականության գաղափարը: Վերը նշած «խտացումը» իրականությունն է դարձել XVII դ. Եվրոպայում բացարձակապետության՝ արսոլյուտիզմի երևան գալու հետ:

4. 27-ից 28-րդ էջերում շեշտվում է, որ հոր մահից հետո, Ներքին Խաչենի իշխանությունը ստանձնելուց քիչ անց, Հասան-Ջալալը Ներքին Խաչենի տարածքին միացրել է Վերին Խաչենի կամ Ծարի իշխանությունը, քանի որ 1214 թ. Վերին Խաչենի տեր Վախտանգի մահից հետո Իվանե Ջաքարյանն այս գավառը տվել է Հասան-Ջալալին (մեջբերում--«Կարող ենք ասել, որ Իվանե աթաբեկը Հաթերք գավառը հանձնել էր Հասան-Ջալալ-Դոլային և այն գտնվում էր Արցախի իշխանաց իշխանի տիրապետության ներքո» (28-րդ էջի առաջին պարբերության վերջ)), և այս եղելությունն է վավերացրել Բաթու խանը, երբ ճանաչել է Վերին Խաչենի բերդերի պատկանելիությունը Հասան-Ջալալին: Սակայն 74-րդ էջում աստենախոսը հայտարարում է, որ Վերին Խաչենի իշխանությունը գտնվել է Ջաքարյանների գերիշխանության տակ, քանի որ 1244 թ. գրված հիշատակարանում Գրիգոր Դոփյանն իրեն համարում է Ավագ Ջաքարյանի վասալը: Վերոնշյալը ցոյց է տալիս, որ աստենախոսը խճողվել է պատմական փաստերի շարադրանքում: Իրականում մինչ 1244 թ. Վերին Խաչենի իշխանությունը ոչ միայն չի պատկանել, այլ նաև չի գտնվել Ներքին Խաչենի իշխանների ազդեցության տակ: Կ. Գանձակեցու հաղորդումից պետք է ենթադրենք, որ XIII դ. կեսերին Բաթու խանն իրեն այցելած Հասան-Ջալալին հանձնել է Վերին Խաչենի իշխանության տարածքում գտնվող Ականա բերդը: Սակայն Գրիգորի որդի Հասանը հիշվում է, որպես Ականակի տեր/ Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVIդդ, էջ 234/, 1312 թ. գրված հիշատակարանում այս բերդը վերստին նշվում է Վերին Խաչենի իշխանության կազմում/ Մ. Բարխուտարեանց Աղվանից աշխարհ և դրացիք, Արցախ, Ե, 1999, էջ 305/ինչը վկայությունն է այն փաստի, որ XIVդ. սկզբում Վերին Խաչենի իշխանությունը չէր գտնվում Հասան-Ջալալյանների իշխանության տակ:

5. Երկրորդ գլխի II ենթագլուխը, որ վերնագրված է «Հասան Ջալալ-Դոլայի արտաքին քաղաքականությունը», սկսվում է «Հասան Ջալալ-Դոլայի գահակալություն» բառերով (էջ 42-րդ):

Նկատենք, որ ինչքան էլ Հասան-Չալալն իրեն անվաներ թագավոր և ինքնակալ, սակայն մնում էր մոնղոլների արշավանքներից առաջ Չաքարյանների վասալը, իսկ Անդրկովկաս մոնղոլների ներխուժումից հետո՝ վերջիններիս ենթակա անդրկովկասյան հինգ թումաններից մեկի կառավարիչը: Նման գրելառճ առկա է նաև ապագա դարերում. Այսպես՝ ատենախոսի կողմից 119-րդ էջում մեջբերված է 1589 թ. հիշատակարան, ուր Խաչենի տեր Չալալի իշխանությունը հորջորջվում է թագավորություն այն պարագայում, երբ հիշատակարանում շեշտվում է, որ Խաչենին տիրացել են օսմանցիները:

6. 29-րդ էջում նշվում է, որ Խոխանաբերդն ու Դարպասներ ապարանքը կառուցել է Հասան-Չալալը: Դա ճիշտ չէ: Չնայած Շ. Մկրտչյանը գտնում է, որ այս բերդը կառուցել է Հասան-Չալալը, սակայն այդ մասին ոչ մի վկայություն նա չի ներկայացնում, Խոխանաբերդը գոյություն ունի դեռ վաղ միջնադարից /Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Ե. 1988, հ. 2, էջ 765; Սարգսյան, Ս. Ա. Խոխանաբերդ. նորահայտ վիմագրեր Խաղբակյանների մասին. Լրաբեր Հասարակական Գիտությունների, 1996, № 3 . էջ 96-105/, իսկ Դարպասներ պալատական համալիրի տարածքում գտնվում է տապանատուն, ուր տեղադրված խաչքարերը, որ թվագրված են 1173, 1211, 1180, 1183 թթ., վկայում են, որ այս պալատական համալիրը նույնպես ավելի հին է: ./III. Мкpтчян, նշված աշխ., էջ 22, Դիվան հայ վիմագրության, պ. V, էջ 74/: Պետք է նշենք նաև, որ Մ. Հասարայանը, ում, Դարպասների թվագրման հետ կապված, հղում է անում ատենախոսը՝ նրան համարելով ճարտարապետ, պատմաբան, բանասեր է:

7. Ատենախոսի անտեղյակության արդյունք է 31-րդ էջում տեղ գտած այն պնդումը, թե Ներսես Պարթևը արտոնել էր իշխանական տոհմերի ներկայացուցիչներին թաղել հայտնի ու նշանակալից եկեղեցիների գավիթներում: Բ. Ուլուբաբյանը, որի գրքի 383-րդ էջին հղում է տալիս ատենախոսը, գրում է, որ Ներսես Պարթևն արտոնել է արքայական ու նախարարական տոհմերին իրենց ներկայացուցիչներին թաղել «եկեղեցիների ու վանքերի սրբազան հողում» և ոչ գավթում: Ատենախոսը տեղյակ չէ, որ թաղածածկ գավիթները հայ եկեղեցաշինությունում ի հայտ են եկել X դ. / Թ. Թորամանյան, Գալիթ և Ժամատուն հայոց հնագույն եկեղեցիներու մեջ, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1912, էջ 33/:

8. 34-րդ և 35-րդ էջերում Գանձասարի եկեղեցու անվանակոչման ավանդապատումը ամբողջովին ներկայացնելուց հետո ատենախոսը վերլուծում է, թե Հասան-Չալալն իր որ եղբորից է խլել Հովհաննես Մկրտչի գլուխը և եզրակացնում. «դեպքը տեղի է ունեցել 1211թ.» պետք է ենթադրել, որ նշխարին տիրացած է եղել Չաքարեն, քանզի ինչպես արդեն վերը նշել ենք, Դուլան մահացել էր 1202թ., իսկ Իվանեն էլ դեռևս չէր ծնվել»: Ատենախոսը փաստորեն տեղյակ չէ, որ գործ ունի ավանդազրույցի հետ, որի ճշմարտությունից հեռու լինելու մասին է խոսում նաև այն, որ այստեղ նշված 1211 թ.-ից երկու տարի անց է Հասան-Չալալը Ներքին Խաչենի իշխան դարձել:

9. 37-րդ էջում ատենախոսն իր թեմայի հետ կապ չունեցող ու անհարկի եզրակացություններ է անում այն մասին, թե «XIX դարի երկրորդ կեսից սկսած Հասան-Չալալյաններն իրենց հանգուցյալներին սկսել են հուղարկավորել գյուղի գերեզմանատանը, որի մի մասը փոխված է եկեղեցու հարավային պարսպի տակ: Սույն փաստը մեզ հիմք է տալիս ասելու, որ, ամենայն

հավանականությամբ, Գանձասարի եկեղեցու հյուսիսային պատի տակ գտնվող ազատ տարածությունն այլևս սպառվել էր»:

10. Հայ-վրացական բանակի և ղվչաղների միջև 1223 թ. տեղի ունեցած ճակատամարտին Հասան-Ջալալի մասնակցությունը հեղինակը հիմնավորում է այն հանգամանքով, որ Խորեզմշահ Ջալալ ադ-Դինի վեզիրի հետ 1227 թ. բանակցություններում Խաչենի տերը պարտավորվել է ազատ արձակել 700 մահմեդականների, որոնց թվում կային ղվչաղների հետ վերոհիշյալ ճակատամարտի ժամանակ գերվածներ (ատենախոսության 44-րդ և 45-րդ էջեր): Վերոգրյալից պարզ է, որ հեղինակը թյուր տեղեկություն ունի ղվչաղների մասին: Այսպիսով՝ ատենախոսը եզրակացրել է, որ ղվչաղները մահմեդականություն են դավանել և գերի ղվչաղները հանձնվել են իրենց հավատակից խորեզմշահի վեզիրին: Մինչդեռ իրականում ղվչաղները թենգրիականության հետևորդ էին:

11. Ատենախոսության 48-րդ էջում նշվում է, որ Կիրակոս Գանձակեցին «ոչինչ չի հայտնում նման (Հասան-Ջալալի դստեր՝ Ռուզուքանի և Չարմաղանի որդի Բորայի) ամուսնության մասին, այլ միայն նշում է Ռուզուքանի՝ Բորա նոյնի կինը լինելու փաստը»: Ռուզուքանի՝ Բորա նոյնի կինը լինելու փաստն արձանագրելն արդեն իսկ նշանակում է հայտնել ամուսնության մասին, հակառակ դեպքում Ռուզուքանը պետք է հարձի կարգավիճակ ունենար: Հեղինակը, որ ի դեմս Հասան-Ջալալի, ցանկանում է տեսնել եկեղեցուն անմնացորդ փարած պատմական անձի, ինքն իրեն հարց է տալիս, թե ինչպե՞ս կարող էր Արցախի իշխանը, թեկուզ և ստիպված, ամուսնացնել աղջկան այլահավատ մոնղոլի հետ և անմիջապես գտնում է մեղմացուցիչ հանգամանք՝ հենվելով Բ. Ուլուբաբյանի եզրակացության վրա, հեղինակը պնդում է, որ Ռուզուքանի մոնղոլ ամուսինը մահմեդական չի եղել և ենթադրում, որ նա քրիստոնյա էր: Դժվար է ասել եղել է Բորան քրիստոնյա թե ոչ, սակայն հայտնի է, որ նույնիսկ քրիստոնյա մոնղոլները կանանց ունեին: Համաձայն Կ. Գանձակեցու՝ Բորան մոնոգամ չի եղել: Նա մինչ Ռուզուքանին կնության առնելն ամուսնացած էր Ղուրուն նոյնի աղջկա հետ: (Կ. Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե. 1982, էջ 208): Հեղինակը պետք է համաձայնի, որ պոլիգամիան արգելված է տիեզերական, այդ թվում հայոց եկեղեցու կանոններով:

12. 51-րդ էջում հեղինակը, անդրադառնալով Քյոսեդաղի ճակատամարտին, մեջբերում է Կլոդ Մութաֆյանին. «1243 թ. Կյոզե Դաղի պարտությունը նշանավորեց սելջուկյան տերության վերջնական անկումը»: Սա սխալ պնդում է. իրականում Իկոնիայի կամ Ռումի սուլթանությունը գոյատևել է մինչև 1302 թ., երբ մեռավ սուլթան Ալա էդ-Դին Քեյ-Կուբադ III-ը /Райс Т. «Сельджуки. Кочевники-завоеватели Малой Азии», М, Центрполиграф, 2004. с. 79-80/:

13. Ատենախոսության 51-ից 54-րդ էջերում մեջբերումներ անելով Լ. Տեր-Պետրոսյանի, Գ.Միքայելյանի, Է. Դանիելյանի աշխատություններից՝ ատենախոսը փորձում է Հասան-Ջալալին ներկայացնել որպես Կիլիկիա մոնղոլական ներխուժման արհավիրքը կասեցնողի և փրկչի: Իրականում մոնղոլների ռազմավարական նպատակների մեջ մտնում էր Կիլիկյան Հայաստանն օգտագործել որպես ֆորպոստ Մերձավոր Արևելքի իսլամական պետությունների դեմ ծրագրված արշավանքների համար և Եվրոպայի հետ կապող օղակ: Այսպիսով, եթե նույնիսկ Հասան-Ջալալը

նշված վայրում և նշված ժամանակ չլինել էլ, մոնղոլների և կիլիկյան արքունիքի միջև բանակցություններ տեղի էին ունենալու, որովհետև երկու կողմերի շահը նույնն էր պահանջում: Հայտնի է, որ մոնղոլները Կիլիկյան Հայաստանի հետ կնքած պայմանագրին նման պայմանագրեր կնքեցին Անտիոքի իշխանապետության և Տրիպոլիի կոմսության հետ /Peter Jackson, *The Mongols and the West, 1221-1410*, Cambridge, 2005, p. 167-168/: Ասորի ժամանակագիր Բարիեբրեոսն էլ հայտնում է, որ Քյուսեդաղի ճակատամարտից առաջ Կոստանդին Պալլի գլխավորած պատվիրակությունը Կեսարիայում բանակցություններ է վարել մոնղոլների հետ և վերջիններիս հետ զինակցություն հաստատել /Bar Hebraeus, *Cronography*, London, 1976, p. 408/:

14. Ատենախոսության 54-ից 66-րդ էջերում քննարկվում է նվաճված երկրներում մոնղոլական հարկային քաղաքականության ծանրացումը և այդ քաղաքականությանը Հասան-Ջալալի գոհ գնալը: Ատենախոսի կարծիքով Հասան-Ջալալը դարձել է հարկահան Արդունի կամայականությունների թիրախը, «ով առանձնահատուկ ատելություն ու թշնամանք էր տածում Արցախի իշխանաց իշխանի հանդեպ, ինչն առաջին հերթին կապված էր Հասան-Ջալալ-Դոլայի քրիստոնյա լինելու և իր ազգին ու հավատին հավատարիմ մնալու հետ»: 66-րդ էջում էլ ատենախոսը պնդում է, թե Արդունը Հասան-Ջալալի առջև կրոնափոխության պահանջ է դրել: Սակայն Հասան-Ջալալի ձեռքակալության ու սպանության մասին խոսող Կ.Գանձակեցին և Վարդան Արևելցին ոչինչ չեն ասում նման պահանջի մասին՝ հայտնելով միայն, որ Արդունը հրամայել է Հասան-Ջալալին սպանել քրիստոնյա լինելու համար: Այս պնդումը, որի վրա հենվում է նաև հեղինակը, խիստ կասկածելի է, եթե հաշվի առնենք այն փաստը, որ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ Արդունի և Ամադուի Նորավանքը հարդարող Սմբատ Օրբելյանի միջև ջերմ բարեկամական հարաբերություններ են եղել: (Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986, 331): Քրիստոնյա լինելու համար Հասան-Ջալալի նահատակությունը թեական է: Միջնադարի քրիստոնյա, մանավանդ հոգևորական պատմիչների համար իրենց պատմագրության հերոսներին հավատի համար մարտիրոսի լուսապսակով օժտելն ընդունված ձև էր: Պետք է նշենք նաև, որ ո՛չ Ջուվեյնին, ո՛չ Շարաֆ էդ-Դինը ոչինչ չեն ասում Արդունի մուսուլման լինելու մասին: Սակայն Ջուվեյնին շատ հետաքրքիր տեղեկություններ է տալիս քննարկվող իրադարձությունների մասին: Նա հայտնում է, որ 1244 թ. Արդունը Ուզեդեյ խանի մահից հետո ռեգենտ դարձած Տուրաքանա խաթունի կողմից նշանակվելով Միջին և Մերձավոր Արևելքում մոնղոլների տիրապետության տակ հայտնված երկրների կառավարիչ, էմիր Բաչու նոյունին և նրա մերձավոր ռազմական վերնախավին զրկեց հարկեր հավաքելու մենաշնորհից, դրանով սուր հակամարտության մեջ ներքաշվելով վերջիններիս հետ: Այս հակամարտության կարևոր դրվագներից մեկն էր էմիր Արդունի նկատմամբ հարուցած դատական պրոցեսը, որը տեղի ունեցավ 1256 թ. ամռանը Ղարադորումում:/ Ala at Din Ata Malik Juvaini, *Genghis Khan, The History of the world conqueror*, Manchester University Press, p. 522-523/ Այս հաղորդմանը լրացնում է Ստեփանոս Օրբելյանը: Նա հայտնում է, որ էմիր Արդունը թալանի, կաշառակերության և սպանությունների մեղադրանքով ձեռքակալվել է և միայն Սյունիքի տեր Սմբատ Օրբելյանի կողմից իր օգտին ցուցմունք տալուց հետո արդարացվել /ի տարբերություն Ջուվեյնիի, Օրբելյանն այս իրադարձությունները

թվագրում է 1257 թ./: Ճիշտ է, հայ պատմիչը նշում է, որ Արղունը ձերբակալվել էր Սևինչ բեկի և սահիբ դիվան Շարաֆ էդ-Դինի մեղադրանքով, սակայն ամենայն հավանականությամբ եղել են նաև այլ բողոքողներ, այդ թվում նաև նշված ժամանակ Ղարադորում մեկնած Հասան-Ջալալը, որոնց նկատմամբ Արղունի հաշվեհարդարը պայմանավորված էր վերը նշված հանգամանքով:

15. 55-րդ էջի վերջում հեղինակը Բաթունին համարում է Գույուկ խանի մահից հետո մեծ խանի ժամանակավոր պաշտոնակատար: Իրականում Բաթուն մոնղոլական տերության արևմտյան հատվածի՝ Ջուչիի ուլուսի տիրակալն էր, իսկ Գույուկի մահից հետո մոնղոլական տերության ռեգենտ դարձավ նրա այրին՝ Օդուլ-Ղայմիշը:/ Juvaini, Genghis Khan, The History of the world conqueror, p. 263/:

16. Էջ 64-ում հեղինակը մերժում է Հ. Մանանդյանի, Բ. Ուլուբաբյանի, Վ. Բալայանի այն եզրակացությունը, որ Հասան Ջալալը մասնակցել է 1259թ. Վրաստանում բռնկված ապստամբությանը, քանի որ նա դեռ չէր վերադարձել Մոնղոլիայից: Ատենախոսության հեղինակը, 63-րդ էջում համարելով Վրաստանը միասնական պետություն, նրա արքա Դավթին նշում է որպես հակամոնղոլական ապստամբության մասնակից: Նա տեղյակ չէ որ 1248 թ. Գույուկ խանը բաժանեց Վրաստանը Դավիթ VI Նարինի և Դավիթ VII Ուլուի միջև: Տեղյակ չէ նաև, որ ապստամբությունը տևել է երեք տարի և, որ Իմերեթում 1259թ. Դավիթ Նարինի բարձրացրած ապստամբությանը Քարթլի-Կախեթում և Սոմխեթում իշխող նրա ազգական Ուլու Դավիթը միացել է 1260թ., որից հետո ապստամբությունն ընդգրկել է ոչ միայն բուն Վրաստանը, այլև մինչև մոնղոլական արշավանքները Վրացական թագավորության մաս կազմող հայկական տարածքները և ավարտվել 1262թ.:

17. 68-ից 71-րդ էջերում հեղինակը, քննարկելով Հասան Ջալալի թաղման վայրի հարցը, գալիս է այն եզրահանգման, որ հանգուցյալի որդին՝ Իվանեն, հորը հուղարկավորել է «Գանձասարի եկեղեցու գավթի հարավարևմտյան մասում» առանց մակագրության տապանաքարի տակ, քանի որ «Հուլավու խանը, Արղունն ու նրա ստորադրյալները, տեղեկանալով Աթաբեկ-Իվանեի՝ հոր մարմնի մասունքները գողանալու մասին, կփորձեին գտնել Արցախի իշխանաց իշխանի գերեզմանը՝ այն պղծելու նպատակով»: Ցանկացած առողջ դատողության տեր անհատի համար, այդ թվում Հուլավուի և Արղունի, որոնք դժվար թե գերեզման պղծելու ցանկություն ունեին, պետք է պարզ լիներ, որ Գանձասարի եկեղեցուն կից կարող էր միայն շատ անվանի հանգուցյալ հուղարկավորվել, իսկ թարմ շիրիմն ու նույնիսկ առանց արձանագրության շիրմաքարը պետք է հուշեին, թե ում մարմինն է այդտեղ ամփոփված:

18. Ատենախոսը 78-րդ էջում, ինչպես նաև եզրակացությունում հայտարարում է. «XIII դարի հայ քաղաքական իրականության մեջ Հասան-Ջալալ-Դուլան ամենանշանավոր պետական, ռազմական ու քաղաքական գործիչներից մեկն էր: Նրա քաղաքական-դիվանագիտական գործունեությունը Հայաստանի միջնադարյան պատմության մեջ եզակի երևույթներից էր»: Սա չափազանցված հայտարարություն է, քանի որ եթե Հասան-Ջալալը սպանվեց, և նրա մահից հետո Խաչենի իշխանությունը թուլացավ, ապա հարևան Սյունիքի իշխան Սմբատ Օրբելյանին

հաջողվեց Վայոց ձորի, Գեղարքունիքի և Կոտայքի հաշվին մեծացնել իր իշխանության սահմանները և իր ժառանգներին թողնել հզոր մի իշխանապետություն:

19. Ատենախոսը, ով սովորաբար ներկայացնում է վիմագրերի ու հիշատակարանների ամբողջական տեքստերը, 86-րդ էջում մեջբերում է Ծարի Գետամիջի վանքում Թովմա Սյունեցու գրած հիշատակարանի նախավերջին նախադասությունը՝ «... հիշել ի տեր զամենայն տանուտեարսն աստուածաշէն երկրիս Ծարայ, նախ Զագին»: Հիշատակարանի նախորդ հատվածում, որը աստենախոսի կողմից բաց է թողվել, սկզբում հիշատակվում են Ծարի իշխան Հասան Դոփյանն ու նրա որդիները, ապա ազատները, ապա վերջում միայն տանուտերերը, որոնցից միայն Զագայի անունն է առկա: Պարզ է, որ Զագան ոչ թե Ներքին Խաչենի և Ծարի բոլոր իշխանավորների գահերեցն էր, ինչպես պնդում է աստենախոսը, այլ հիշատակարանում առկա աստիճանակարգում երրորդ աստիճանի վրա կանգնած անձ:

20. Ատենախոսության 128-րդ էջի առաջին պարբերությունում Մ. Բարխուտարյանցի «Արցախ» աշխատությունից մեջբերված է 1579թ. հիշատակարան: Ատենախոսը դրան անդրադառնում է միայն որպեսզի շեշտի, որ այդտեղ հիշված է Աղվանից Հովհաննես կաթողիկոսի անունը: Ատենախոսի տեսադաշտից դուրս է մնում շատ կարևոր մի փաստ, այն է, Հայոց կաթողիկոսության կազմում VIIդ. սկզբից գտնվող Սյունյաց մետրոպոլիտությունը հիշատակարանի ստեղծման թվականին հայտնվել է Գանձասարի կաթողիկոսական աթոռի ենթակայության տակ:

Վերոշարադրյալը ակնհայտ է դարձնում, որ աստենախոսությունը չի համապատասխանում ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին. հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն չէ և չի կարող գնահատվել իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ նոր խնդրի առաջադրում, իսկ նրա հեղինակը չի կարող հավակնել իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

**Պաշտոնական ընդդիմախոս,
ՀՊՏՀ փիլիսոփայության և
հայոց պատմության ամբիոնի
դոցենտ, պ.գ.թ.**



Լ.Մկրտումյան

09.06.2020թ.

Ընդդիմախոս Լ.Մկրտումյանի ստորագրությունը համաստատում եմ
**Հայոց պատմության 004 մասնագիտական
խորհրդի գիտ. քարտուղար՝**



Հակոբ Մուրադյան